ՀԻԱՐՈՒՐԱՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. Մարտ: № 20: Գինը՝ 50 կոպ.





ԱԼԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արբենացի՛ր, Գյումրիս...

(Հատված պոեմից)

Արձակագիր Ալբերտ Հովհաննիսյանը տպագրության է հանձնել «Ասք անցավորաց» մեծածավալ պոեմը, որը մի ուրույն ստեղծագործություն է, կյանքաշունչ գրվագներով առլեցուն մի յուրատիպ հիշատակարան՝ հեռավոր ու մոտ ժամանակների իմաստասեր ու ավանդապահ մարդկանց մասին: Հեղինակն իր առջև խնդիր է դրել սրբագրել մարդկային խիղճը ըարեգործ անցավորների, ազնտալի երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի հանդեպ:

«Կումայրիի» ընթերցողներին ներկայացնում մի հատված այդ պոեմից, որը գրվել է 1986—1989 թ. թ. Հառիճ գյուղում:

Խ

Հիշենք Թաթոսին՝
Անտիկյան տոհմից.
Այն լուսահոգին,
Որ սրբագործեց
Միշտ սեր ու բարիք,
Իր խոսքն ավանդեց՝
— «Գյումրիս, օր չէղնի,
Ի՞նչքխ տի ապրիք».
Ասում էր՝ «Գյումրին
Հոգու կրակ է,
Գյումրին գիշերվա
Հույս ու ճրագ է,
Որ բարի լույսը
Գյումրիից հկել,
Արար աշխարհին
Օրհնանքն է հղել,
Դարձել բարության
Նշխար — մանանա»:
Նա որմնադիր էր
Ու իմաստասեր.
Խորհուրդ կհաներ
Իր սրտի խորքից
Ու կխրատեր.
«Քաղքիս պատիվը իմ աչքի լուսն է,
Բանձր պայելը՝ մենձ նպատակս,
Էնիկ իմ կյանքի հավատն ու հույսն է,
Մեռնելուս օրվա քաղցր կոմակս:
Ամեն ինչի մեջ կա մի նպատակ,
Էս գլխեն հարի ծերը աշխարքի
Առանց նպատակ մարդս չի անցնի,
Հըմը էս գուզեմ, օր իրիկ էղնի հալալ ու շիտակ,
Ճամփորդն ունենա ազնիվ նպատակ.
Էն քարն, օր վերեն վար կգլորվի,
Էնպեսնա չի գա, նպատակ ունի,
Գուբա, օր իրա լավ տեղը առնի.
Էդպես էլ վարեն վեր կելնող մարդը
Իր քիլքը ունի ու նպատակը.
Հըմը ես գուզեմ, օր ազնիվ էղնի էնօր կտանը...»:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Լուսանկարը՝ Ս. Գուլյանի

ՆԿԱՐՈՒՄ.— Պերմի մեխանիզատորները Շիրակացի խճուղում աշխատանք կատարելիս. Լուսանկարը՝ Վ. Կոտովի

Արթնա՛ցի՛ր, Գյումրիս...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եվ հիշենք նրան...
Կար գրիչ Երեմ՝
Աշխարհը քննող
Մի լրագրող
Եվ մարդ անմահ,
Որ գովերգակն էր Գյումրի քաղաքի
Ու տարեգիրը նրա պատմության.
Նա իր հարազատ քաղաքի մասին
Ասույթներ գրեց, պատումներ բազում
Ու վերնագրեց վերջինը այսպես՝
«Իմ ոսկի քաղաք, մեր ճամփի հրաց».
Գրեց՝ «Իրավ է, կա՛ ոսկի քաղաք,
Քաղաքն այդ հրաշք,
Աստվածաբնակ,
Գյումրիս է, որ կա,
Գյումրիս բարության արտն է անթառամ
Եվ առաքիչը ճոխ վայելումի,
Նա քո կողքին է, և ամեն անգամ
Իր ծով խնդումից բաժին կմնանի.
Գյումրին անվանեց Հայոսի քնար
Ոսկի քաղաքի անվամբ զարդարեց
Ներբողեց նրան, գովերգեց ճարտար,
Արտի շոյանքի լույսով հարդարեց.
Եվ հիշենք նրան ու չմոռանանք։
Հիշատակն հարգենք
Հարգո Մարուքի
Եվ վարքը հիշենք
Այն եզանվարցու,—
Շիրակում համալն
Հեքիաթի նման
Մի խոսք կար հոչակ՝
«Մարուքի քաղաք».
... Առավոտ ծեգին,—
Ամեն օր, այդպես.
Նա քնից կելներ
Ու կասեր այսպես՝
— «Ես քաղաք կերթամ.
Ու չէր հարցնում
Կինը երբևէ՝
— Այդ ու՞ր, ինչ քաղաք,
Քանզի աշխարհում
Այդ կնոջ համար
Կար մի քաղաք,
Քաղաքն այդ հրաշք
Գյումրին էր, որ կար։

Ռեստորանները չէր պարպել, տակալն
Իր չարությունը...
Սև դեկտեմբերն էր, յոթը՝ սև ամսի,
Առավոտն ամպոտ,
Քամին ոռնում էր այնպես ուժգնահոս,
Հեքով մրրկաբոթ.
Ախ, Գյումրին, Գյումրին,
Մահին անտեղյակ,
Իր ամանորի զգեստն էր գործում,
Փայլք ու շուք տալով իր տունուտեղին...
... Լույսը դեղնոտվեց, մութը սաստկացավ,
Սրատվեց կարծես հորիզոնն հեռվում—
Երկու կես եղավ...
Ա՜խ, Գյումրին նորից երգեց մահաձայն,
Հնօրյա երգը վերքի պես բացվեց՝
«Ժաժքը էլավ
Գյումրին ավերեց»։
Ինչքա՜ն կյանքի ջահեր հանգան—
Հեյ վախ, հանգան,
Ինչքան Տիր ու ջահել հանգան—
Հե՛յ վա՜խ հանգան,
Ա՜խ, ինչքան տատ՝ ու մայր հանգան,
Հե՛յ վա՜խ հանգան,
Ա՜խ, քանի պապ ու հայր հանգան
Հե՛յ վա՜խ հանգան,
Նորապսակ, ա՜խ, քանի հարս, քանի փեսա—
Զոհված տեսա,
Հե՛յ, վա՜խ, տեսա,
Հրեշտակաթև քանի մանուկ
Զարկված տեսա,
Հե՛յ, վա՜խ, տեսա,
Ա՜խ, քանի սեր սև կրակով
Խարկված տեսա,
Հե՛յ, վա՜խ, տեսա,

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

Ա՜խ, այդ դաժան երկրաշարժը

ՀՈՒՓՍԻԿ ԵՎ ԼԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐ

Նկարից նայող այս գեղեցիկ աղջիկները հարազատ քույրեր են՝ 13 և 9 տարեկան: Հուիփսիկը սովորում էր № 2 միջնակարգ դպրոցում, իսկ Լիաննան՝ № 16 դպրոցում: Հուիփսիկը սիրում էր երաժշտություն, հաճախում երաժշտական դպրոց: Ծիծաղկոտ ու ժպտերես էր, շատ ընկերասեր: Փլատակներից հանելիս, նա առաջինը հիշատակում էր ընկերուհու անունը՝ վշտահար ասելով, որ նա այլևս չկա, ապա...դիմում մորը՝ «Մայրիկ, ես մեռնել չեմ ուզում, փրկիր ինձ...»: Ինչպե՞ս փրկեր խեղճ մայրը: Եթե հնարավոր լինե՞ր...

Հուիփսիկը երազում էր բա նասեր դառնալ, բայց այդպես էլ չիրականացավ նրա երազանքը: Անմեղ երեխա էր և Լիաննան, մարդկային ու շատ խելացի: Լավ ասմունքում էր, սիրում էր ծաղիկներ: Երկու քույրերը միշտ անբաժան էին իրարից: Չար ճակատագրին միահին ընդառաջ գնացին: Մայրական սիրտը չդիմացավ այդ վշտին ու...

Ես ինչպես անցնեմ միայնակ
Ձեր սիրած այս հին վայրերից,
Ես ինչպես կրեմ կրծքիս տակ
Այսքան հառաչանք ու թախիծ:

ԱՐՈՒՍՅԱԿ ԵՎ ՍԵՐԳՈ ՍԱՀԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐ

Արուսյակը ծնվել է 1974 թը վականի օգոստոսի 29-ին Լենինականում: 1981 թ.-ից սովորում էր Ղարիբջանյանի անվան № 9 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանում: Սիրում էր երգել, պարել, արտասանել: Բոլոր ուսուցիչների կողմից սիրված էր. պատրաստակամորեն պարապում էր «Այբբեն նարանի» և Նոր տարվա հանդեսների համար ցածր դասարանի աշակերտների հետ: Այդ շարաթաստիկ օրը Արուսյակը եղբոր հետ գնաց դպրոց, որտեղ և նրանք կնքեցին իրենց մահկանացուն:

ՍԵՐԳՈՆ ծնվել է 1981 թ. հոկտեմբերի 23-ին: 1988 թվականից սովորում էր Ղարիբջանյանի անվան № 9 միջն. դպրոցի առաջին դասարանում: Չնայած դեռ չէր բոլորել յոթ տարին, սակայն նրա մոտ նկատվում էր գիտելիքների նկատմամբ ծարավ ու բարձր ընդունակություններ, որի շնորհիվ և Սերգոյին ընդունեցին դպրոց: Դեռ չէր հասցրել ուսանել հայոց «Այբբենարանը», երբ չարաբաստիկ երկրաշարժը կտրեց նրա կյանքի թելը: Քույր և եղբայր իրար հետ կապված էին թե տանը, թե դպրոցում:

Սիրելի Արուսյակ և Սերգո, դուք միշտ կմնաք մեր հիշողության մեջ...

ԵՐԿՐԱՇԱՐԺ, ԹԵ՞ ՍԱՂԿԱՔԱՂ

ՆԵԼԼԻ ՄԻՇԱՅԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ծնվել էր 1981 թ., Լենինականում: Նելլին հաճախում էր № 9 դպրոցի առաջին դասարան: Նա դեռ չէր հասցրել հայկական այբուբենին լրիվ տիրապետել, երբ անմեղ զոհ դարձավ դաժան տարերքին: Նելլին դասարանի գերազանցիկներից էր: Հաճախ էր գերազանց գնահատականներ ստացած տուն գալիս, օրագիրը մեկնում մայրիկին, ուրախացնում: Ծնողները մեծ հույսեր էին կապում Նելլիի հետ, սակայն դաժան մահը խլեց մանկան կյանքը:

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ծնվել էր 1974 թ. հունվարի 4-ին, Լենինականում: Սովորում էր № 9 միջն. դպրոցի 8-րդ դասարանում: Փոքր հասակից սիրում էր թբուչումներ, կենդանիներ, հաճախում էր պիոներների պալատ, որտեղ թռչուններ կալին, կերակրում էր նրանց, հմայվում դալլալով:

Դեկտեմբերի 7-ի առավոտյան Նարինեն գնաց դասի և այլևս չվերադարձավ: Ամբողջ դասարանից փրկվեցին միայն մի քանիսը, մնացածները նա հատակվեցին...

ՎԱՐԴՈՒՀԻ ԱՎԵՏԻՔԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻՆ

Անգութ աղետը թփերից պոկեց տարավ ամենանուրբ ու ամենագեղեցիկ ծաղիկներին, նրանց մեջ նաև... Այո, դաժան ձեռքով ծաղկե փեջի միջից պոկեց իրենց ծնողների կողմից փայփայված ու սիրելի բալիկներին՝ ՎԱՐԴՈՒՀԻ ու ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻՆ, որոնք մրնացին № 10 դպրոցի փրկվածների տակ:

ՎԱՐԴՈՒՀԻ ԱՎԵՏԻՔԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնված 1975 թ. մայիսի 1-ին, երազում էր դառնալ ուսուցչուհի: Այդպես էլ երազանքը չիրականացած, զոհվեց իր ուսուցչուհիների հետ: Վարդուհին ուներ նուրբ և սպիտակ ձեռքեր, որոնցով կյանք ու լեզու էր տալիս թելերին կրտավի վրա, հաճախում էր գորելենագործության դասընթացներին, պիոներների պալատում:

ՍԱՄՎԵԼԸ՝ ծնված 1977 թ. փետրվարի 18-ին, շատ էր սիրում սպորտը, ուզում էր դառնալ լավ ֆուտբոլիստ, որպեսզի իրեն հեռուստացույցով տեսնեին հարազատները: Միաժամանակ մարզվում էր ֆուտբոլի մանկական թիմում:

Այսօր երեխաների սենյակը վերածվել է զգայացունց թանգարանի, բայց ոչինչ չի սփոփում որդեկորույս ծնողների դատարկ հոգիները:

ՄԻՆՉԵՎ ՕՐՍ ԷԼ ՍՐՏԻ ԹՐԹԻՌՈՎ ՆՐԱՆՔ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ ԷԻՆ ԴՐԵԼ ԴՊՐՈՑ՝ ՊԱՑՈՒՍԱԿՆԵՐՈՎ...

ԱՐԾԱՎ ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԹԱՂՈՒՄ

— Մորս եմ թաղում,—
Հազիվ շշնջաց մեկը դառնաղի,
Պարկը ցած դրեց,
Ձեռքերով բացեց աչքերը հողի:
—Մորս եմ թաղում
Առանց հոգեհաց,
Առանց դագաղի,—
Ու արցունքներով
Ծաղիկ նկարեց մոր շիրմաթմբին:
Անմեղ զոհերին հազար ողորմի:

ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿԻ ՂԱՑԹԱՆՋՅԱՆ

Խելացի և ընկերասեր էր Փոքրիկ մաթեմատիկոսը՝ ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿԻ ՂԱՑԹԱՆՋՅԱՆԸ, որը ծնվել էր 1979 թվականին: Սովորում էր Ա. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանում: Շատ էր սիրում մաթեմատիկա և ֆրանսերեն առարկաները: Ազատ ժամանակ տարվում էր շախմատով, խաղում իր հոր՝ Ռաֆիկ Ղազթանջաճի հետ, մասնակցում էր լոգի պարապմունքներին: Շախմատի ուսուցիչը մեծ ապագա էր խոստանում Արթուրիկին: Արթուրիկը միշտ երազում էր գիտնական դառնալ, շատ էր սիրում լուծել դժվար թվացող խնդիրներ: Նա իր ծնողների միակ զավակն էր, դպրոցի գերազանցիկ աշակերտներից մեկը: Ա՜խ, այդ դաժան երկրաշարժը ի՜նչ երազանքներ կիատաց թողեց... Բառերով չգրվող այդ մեծ վիշտը սպիտակ ձյան պես նստեց նրա մոր մազերին:

Չեխոսլովակիայում երեք տարի մնալուց հետո կնոջ և դստեր հետ հայրական տուն էր եկել արձակուրդ վերցրած Հովհաննես Խաչատրյանը: Այդ առթիվ էին այդ դժնդակ օրը հավաքվել մի հարկի տակ 10 ազգակիցները: Դարա նակալ տարերքը նրանց գըտավ այստեղ...

ՏԱՍԸ ՄԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՑ

ՌԱԶՄԻԿ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1932 թ. Ախուրյանի շրջանի Կապս գյուղում: Այնուհետև տեղափոխվել է Լենինական: Հիանալի անձնավորություն էր, բարի, ուրախ: Կյանքի իմաստն ու երջանկությունը տեսնում էր երեք զավակների մեջ: 22 տարեկանից մինչև թոշակի անցնելը իրեն նվիրաբերել էր զինվորական գործին:

Ռազմիկը լավ լուսանկարիչ էր: Հարարատիկ օրը նա ուրախանում էր իր թոռներով ու մերձավորներով, որոնց հետ էլ զոհվեց:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌԱԶՄԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1963 թվականի փետրվարի 22-ին էր ծնվել, Լենինական քաղաքում: Ավարտելով № 23 ռուսական դպրոցը, 1980 թվականին մեկնեց զինվորական ծառայության: Չեխոսլովակիայում էր: Ծառայում էր ազնվորեն, բարեխղճորեն, հոր նման զինվորական դառնալու, նրա ուղիով ընթանալու հաստատ վճռականությամբ: Ինչ ուրախություն էր նրա այցը հայրենի օջախ եռամյա բացակայությունից հետո, որն ավաղ վերածվեց սգի:

ԳԱՅԱՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1966 թվականին, Լենինականում: Սովորել է մանկավարժական ուսումնարանում: Սևաչյա Գայանեին շատ էին սիրում ընկերներն ու ուսուցիչները:

Ուսումնարանն ավարտելուց հետո աշխատում էր Ախուրյանի № 1 մանկապարտեզում: Հովհաննեսի հետ էր ամուսնացել: Մանկապարտեզում Գայանեին երեխաները երկրորդ մայր էին համարում: Ափսոս, շուտ թառամեց գարնանային ծաղիկ կյանքը:

Ծնողների՝ Հովհաննեսի և Գայանեի հետ զոհվեց 7 ամիսը տակավին չլրացած դուստրը՝ ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:

ՆԱՐԻՆԵ ՍԵՐՈԲԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նարինեն ծնվել է 1964 թ., Լենինականում: 1981 թվականին ավարտելով միջնակարգ դպրոցը, ընդունվեց թեթև արդյունաբերության տեխնիկում: Ուսման առաջավոր էր, օրինակելի ուսանող, բարի ու ընկերասեր: Մշտապես օգնության էր հասնում բոլոր նրանց, ովքեր զգում էին իր կարիքը:

Տեխնիկումն ավարտելուց հետո Նարինեն աշխատում էր տեքստիլ կոմբինատի վերջ Ճամշակման ֆաբրիկայի քիմիական լաբորատորիայում, ուր նրան ամենքն էին սիրում ու հարգում: Նարինեն ամուսնացել էր, 2 երեխաների մայր էր, լավ տնտեսուհի: Նա զոհվեց իր սիրասուն բալիկներին կրծքին սեղմած. ՄԵԼԻՆԵԻ 3 տարին լրացել էր դեկտեմբերի 1-ին, ԱՐԱՄԻԿԸ 7 ամսական էր:

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է Ախուրյանի շրջանի Վաճրամաբերդ գյուղում, 1955 թվականին: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Սուսաննան տեղափոխվել էր Լենինական և աշխատանքի անցել Զկաղովի անվան կարի արտադրական միավորումում: Ծատ էր սիրում կյանքը, ամեն ինչի գեղեցիկն ու կատարյալը:

Աշխատատեղում, թե տանը կոկիկ էր ու հանձնակատար Սուսաննան: Զոհվեց ծաղիկ հասակում՝ թողնելով մորը սևազգեստ, մրմուռը սրտում:

ՋՈՒԼԵՏԱ ԱՂԱՍՈՒ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1934 թվականին, Ախուրյանի շրջանի Վաճրամաբերդ գյուղում: Փոքր հասակից զրկվել է հորից և մընացել մայրական խնամքին: Ամուսնացել էր, երեք զավակների մայր էր: Ծատ էր սիրում որդիներին ու թոռներին: Բոլորին ուրախություն էր պատճառում, մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր:

Հիանալի տնային տնտեսուհի էր Ջուլետան, նրա ուրախությանը չափ ու սահման չկար. արձակուրդ էր եկել զինվոր որդու ընտանիքը: Երեսուն բացակայությունից հետո միայն 10 օր արժանացան միմյանց տեսության, զոհվեցին համատեղ: Այլևս ոչ մի ուժ նրանց չի զատի միմյանցից:

ՍԱԹԵՆԻԿ ՍԱՐԳՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1904 թվականին էր ծնվել, Մայիսյան գյուղում: 5 երեխաների մայր էր Սաթենիկը: 38 տարեկանից զոհվածի այրու ուսերին էր ընկել 5 երեխաների հոգսը: Սաթենիկը զավակներին մեծացրել էր գիշեր-ցերեկ աշխատելով, դառն օրեր տեսնելով: Ապրելով 84 տարի, Սաթենիկը մոռացել էր իր ծանր օրերը: Նա իր մահկանացուն կնքեց աղջկա, փեսայի, թոռնիկի, հարսների և 3 ծոռների հետ միասին:

ՉԵՆՔ ՄՈՌԱՆԱ ՋԵՋ ԲՈԼՈՐԻԴ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱՆՄԵՂ ՋՈՀԵՐ

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

24 ԺԱՄ ԱՂԵՏԻ ՎԱՅՐՈՒՄ

(Դեկտեմբերյան օրերի խրոնիկա՝ պատմության համար)

(Սկիզբը՝ «Հիշողության» № 19-ում)

— Ինչպե՞ս չէ— լինում է պատասխանը:—Նա ողջ է: Միք անհանգստանա: Տեսնելով, որ կասկածում եմ, տարեց մամիկն այս անգամ ինքն է ինձ հարցաքննում:

— Սեղոյենց Կարոյի՞ Ժորաին կհարցնեք, չէ՞, մուզիկանտ է... Միշիկի եղբայրը... «Մանկական աշխարհի» հետևները կապրին, հարց տվեք Սեղոյենց տոները, ձեղի ցույց կուտան...

Ու մինչ կգտնենք այդ հարցեն, նկարիչ ընկերս՝ Հենրիկ Խալաթյանը խնդրում է, որ այցելենք բանվակագործ Տարիել Հակոբյանին: Գնում ենք: Տարիելենց մի հարկանի տունը անտունիների հավաքակայան է հիշեցնում: Տան պատի տակ «Ենջում է» մի «զոհված» «Գազ—24—Վոլգա» մակնիշի ավտոմեքենա: Տերը՝ Տարիելի փեսան, 5-6 մերձավոր այլ հարազատների հետ զոհվել է:

— Տեսնես մյուս արվեստագետներին էլ ծանր դրժբախտություն բաժին չի՞ ընկել,— Կարլենի մտավախությունը հուշում է գնալ երկրաշարժի շտաբ: Մեքենաների խցանված հոսքի մեջ ես ինձ զտնում եմ Ա. Մռավյանի անվան դրամատիկական թատրոնի շենքի դիմաց, կող քիս ավերակված մի գրախանութ է: Նայում եմ, աչքերս նորից թաքվում են: Ճնդիլով ավտոմեքենաների խցանված հոսքը, ես ինձ զգում եմ թատրոն: Նախասրահում սեվով երիզված կանացի երկու մեծադիր լուսանկարներ են: Մոտենում եմ և ցնցվում, երկու շաբաթ առաջ նրանք ինձ մոտ էին՝ ԼԻԶԱ ԱԼԻԽԱՆՅԱՆՆ ՈՒ ՌԻՏԱ ՀԱՐՈՅԱՆԸ: Խոնարհ կանգնել եմ, ակամայից դեռ Ռիտայի ազնիվ քննադատությունն է. «Ի՞նչ է, հայկական հեռուստատեսությունը հո մենակ Երևանում բնակվող դերասանների սեփականությունը չէ՞: Ինչո՞ւ Լենինականի, Կիրովականի, Ղափանի, Գորիսի, Ստեփանավանի և Արցախի թատրոնների դերասանները այստեղ տեղ ու դեր չունեն...»: Պահանջը արդար էր: Լոեցի:

Ահա Արվելյանի փողոցը: № 53 շենքի մոտ երկու ամիս առաջ մենք մեքենայից իջեցրինք բանաստեղծուհի ՏԱՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ (նա այստեղ էր ապրում): Հեծանիվների գործարանում կազմակերպված հանդիպումից էինք վերադառնում: «Հրաբխի ծաղիկ» ժողովածուից կարդացած նրա մի քանի բանաստեղծությունները հուզել էին բանվորներին: Տանյան պատրաստվում էր նոր ժողովածու բերել Երևան, բայց... ինչպե՞ս, ինչ՞ իմանայինք, սիրելի բույր, որ դա կլինի մեր վերջին հանդիպումը: Ի՞նչ իմանայիր, Տանյա, որ մի երկու ամիս հետո պիտի լրիվ որբանա միայն քո խնամքին մնացած 12-ամյա Հայկ որդիդ, որին (ինչպես դու էիր ասում) միայն մի նկար ունես՝ քո կյանքը: Այսօր նորից ձեռքս եմ առել քո «Հրաբխի ծաղիկը», և սրտիս խորքում կուտակված վշտի, ցավի և ցասման լավան քիչ է մնում, թե ժայթքի. այնքան էլ անպատեհ և անիմաստ մահ: Ինչ իմանայիր, Տանյա, որ պիտի չհասցնես ստանալ ԽՍՀՄ գրողների միության քո անդամատոմսը:

Լենինական. կործանված ամեն մի տուն, ամեն մի շենք, ամեն մի հուշարձան՝ Զիթողցոնց կանգուն տներից սկսած մինչև Մայր Հայաստան հուշահամալիրը, ըստիպում են, որ ես հետաքրքրվեմ Իսահակյանի, Օիրազի, Մերկուրովի տուն-թանգարանների և տեղացի մշակույթի երախտավորների «երկրաշարժային» ճակատագրերով: Ծանր վշտի սև ամպեր է իջել գեղանկարիչ, ԽՍՀՄ նկարիչների միության անդամ, մեծ Հայրենականի վետերան Ծանթ Սար-

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ՎԱՀՐԱՄ ԳՐԻԳՈՐԻ

ՀԱԿՈԲՅԱՆ

Բարեկազմ ու հպարտ դիմագծեր ունեցող այս երիտասարդը, 25 տարին դեռ չբոլորած, լալն ու վատը դեռ լիարժեք չճաշակած, հրաժեշտ տրվեց իր ծաղկուն կյանքին։

Վահրամ Հակոբյանը ծնվեց գարնանային պայծառ օրվա հետ, 1963 թ. ապրիլի 19-ին, չիմանալով, որ շուտով վերջակետելու է իր կյանքը։ Վահրամն ավարտել է № 13 միջնակարգ դպրոցը, ընդունվել երկաթգծի ուսումնարան, ավարտելուց հետո աշխատանքի անցավ «Մագնիսահաղորդիչ» գործարանում։ Զորվեց աշխատանքի պահին՝ գործարանում։

ՆՈՒՆԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ

ՋԻՎԱՆՅԱՆ

Ծնվել է 1944 թ., բանվորի ընտանիքում։ Արժաքեկ մեդալով ավարտել է Գոգոլի անվան դպրոցը։ Նույն տարում ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկայի մասնաճյուղի կոնստրուկտորական բաժինը և որպես ինժեներ-կոնստրուկտոր աշխատանքի անցել «Հայէլեկտրակոնդենսատոր» արտադրական միավորումում։

Ուրախ ու կատակասեր, բոլորի կողմից սիրված ու հարգված անձնավորություն էր Նունիկը։ Ուներ մեկ ամիս չիկ։ Հոգատար կին էր և հիանալի մայր։ Իր ամբողջ կյանքն իր ընտանիքին էր նվիրել Նունիկը։

ՎԱՉԳԵՆ ԳԵՎՈՐԳԻ

ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1929 թվականին, մահկանացուն կնքել չարաբաստիկ 1988-ի դեկտեմբերի 7-ին՝ նորակառույց բնակելիի վրա աշխատելու պահին։

Թե՛ № 49 շինվարչությունում որպես հյուսն, թե՛ «Կարմիր նոյեմբեր» կահույքի ֆաբրիկայում որպես ատաղձագործ, թե «Հայշինվառելիքառ» բազայում, և թե հեծանիվի գործարանում աշխատած տարիներին (անգամ 12 տարեկան հասակում հացի գործարանում հացթուխի աշակերտ) շնորհաշատ մասնագետն աչքի է ընկել աշխատանքի նկատմամբ ունեցած իր պատասխանատվությամբ, գիտակցությամբ և վայելել աշխատանքային ընկերների ու շրջապատի մարդկանց ջերմ սերն ու անկեղծ համակրանքը։

Նրա հետնորդները՝ 4 զավակներից երեքը, շարունակում են հոր՝ շինարարի պատվաբեր գործը։

ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐ

ԱՐՇԱԿ ԵՐԵՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ ծնվել է 1956 թ. դեկտեմբերի 5-ին, Արագածի շրջանի Ոներքաղաք գյուղում։ Ավարտել է տեղի 8-ամյա դպրոցը, ուսումը շարունակել Լենինականի պոլիտեխնիկումի ավտոմեքենաների շահագործման բաժնում։ Ծառայել է խորհրդային բանակում, զորացրվելուց հետո աշխատել է Արագածի շրջանի գյուղտեխտեսկոմում որպես անվտանգության տեխնիկայի ինժեներ։ 1984 թվականից Լենինականում էր, աշխատում էր ՆԳ վարչության քրեական մեկուսարանում։

Կինը՝ ՍՈՆԱ ՍԱՐՈՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ ծնվել է 1962 թվականի մարտի 13-ին, Արթիկի շրջանի Հառիճ գյուղում։ Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Երևանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումը։ Ցնցային տնտեսության էր։

Դուստրերից ավագը՝ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ ծնվել է 1982 թվականի հուլիսի 16-ին, միջնակը՝ ԱՆՈՒՇԻԿ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ ծնվել է 1985 թվականի հունվարի 25-ին։ Որդին՝ ԵՐԵՄԻԿ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ ծնվել է 1986 թվականի օգոստոսի 10-ին։

Այնտեղից երեք ամիս առաջ էր Արշակը բնակարան ստացել «Վարդբաղ» թաղամասում, ուրախացել ու աշխարհով մեկ էին եղել մարդ ու կին։ Բա երեխաները...

Ոներքաղաքի գերեզմանոցի փոքրիկ մի հողակտոր այժմ նրանց հավերժական տունն է, զոհված ընտանիքի հուշարձանը «Հավերժ հիշատակ 1988 թ. դեկտեմբերի 7-ի անմեղ զոհերին» որմնագրությամբ։ Պատի մեջ յուրատեսակ մի խաչքար կա ամրացված։

ՊԱՐՈՒՅՐ ԱՆՈՒՇԻ

ԳՈՀԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Ծնվել է 1968 թվականի սեպտեմբերի 13-ին, Լենինական քաղաքում։ № 32 դպրոցի շրջանավարտ աղջիկը հաջողությամբ ավարտեց նաև հաշվապահական ուսումնարանը։ Նա օժտված էր ձայնային հրաշալի տվյալներով և իր կատարած երգերով հաճույքի հասնելի պահեր էր պարգևում մարդկանց։

Գուցե երկու տարեկաց որդին՝ ՍՏԵՓԱՆԸ ևս սիրասում մայրիկից ժառանգել էր երգելու շնորհը, գուցե նա մեծ հաճույք ունեցող մարդ կդառնար, բայց...Եղավ մահաբերուռ երկրաշարժ, որն իր սև մագիլներով, բազմաթիվների շարքում խեղդեց նաև երիտասարդ մորն ու պնդեղ մանկի կին...

ԱՂԱՍԻ ՍԵՐԳՈՅԱՆԻ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Նա ծնվել է 1952 թվականի դեկտեմբերի 7-ին, 1988-ի այդ օրը նրա համար հակատագրական եղավ...

Սովորել է № 4 դպրոցում, ապա պոլիտեխնիկական ինստիտուտի ճշգրիտ մեխանիկայի ֆակուլտետում։ Աշխատել է Լենինականի կոմպրեսորների գործարանում որպես նորարարական բյուրոյի պետ։ Շատ էր սիրում իր աշխատանքը, հարգված ընկեր էր և աշխատատեղում էլ անմեղ զոհ դարձավ։

24 ԺԱՄ ԱՂԵՏԻ ՎԱՅՐՈՒՄ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

գրչյանի սրտին. զոհվել են նրա բազմաթիվ հարազատներն ու որդին։ Երկրաշարժից զոհվել են նաև երիտասարդ բանաստեղծ ԱՐԱՐԱՏ ՄՈՒՐՏՈՒՄՅԱՆԸ, ԽՍՀՄ ճարտարապետների միության անդամ, «Կումայրի» արգելոց-թանգարանի երախտաշատ տնօրեն ԹՈՒՄԻԿ ՕՆԻԿԻ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԸ և մշակույթի բազմաթիվ այլ անհայտ նվիրյալներ։ Փնտրեցի, բայց չգտա շատերին։ Անձնանոթներից եմ տեղեկացում, որ բանաստեղծ Շիրակ Մանուկյանը տնավեր է դարձել, վիրավոր երեխաների և կնոջ հետ տեղափոխվել է Երևան, ժամանակավորապես հանգրվանում է Սերո Խանզադյանի հարկի տակ։

Լենինականում ամենուր ավերակ շենքեր են, եղբայրական հանրապետություններից և աշխարհի տարբեր ծայրերից փրկության և օգնության եկած մարդիկ՝ տարբեր մակնիշի բեռնատարներով, ամբարձիչներով, էքսկավատորներով, վերամբարձ կռունկներով, հրշեջ և շտապ օգնության մեքենաներով, շինարարական տեխնիկայով։ Հարիսոնյան աշտարակաշինությունն են հիշեցնում այստեղ խոզայցու և ֆրանսիացու, ամերիկացու և անգլիացու, ռուսի և ուկրաինացու, աշխարհի հարյուրավոր այլ լեզուներով տարվող բժշկական, շինարարական և պաշտոնական խոսակցությունները։ Տեղացին և ոչ տեղացին անմիջապես զանազանվում են. տեղացի տղամարդիկ ստիրված չեն, կանայք (բոլորը) սև զգեստ են հագել։ Ավերված շենքերը քաղաքի բազմաթիվ բանուկ փողոցներ փակել են։ Հաղորդակցությունն, հատկապես գծային տրանսպորտի աշխատանքը լրիվ խափանված է։ Դրսից եկող մեքենաներն այստեղ վառելափայտ, սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ են ներմուծում։ Մրգեղենով, պահածոներով և այլ սննդամթերքով են ծանրաբեռնված Վրաստանից ժամանող բոլոր ավտոմեքենաները։ Նրանցից մի քանիսի վրա մեսրոպյան մեծ-մեծ տառերով գրված է. «Հայեր, ձեր քավը տանեմ»։ Դե եկ ու մի հուզվիր, հատկապես, երբ գիտես, որ Լենինականն ու Գուրգարիսը եղբայրացած քաղաքներ են, որ Թբիլիսյան խնամքով են Լենինական մտնում Վրաստանից եկող ավտոշարասյուները, որ այստեղ Լենինականում, այսօր հանդած են ոչ միայն Կումայրի արգելոց-թանգարանի լույսերը, այլև չի գործում «Իվերիա» սրճարան-ռեստորանը՝ Մ. Մանուշյան փողոցի վրա։ «Եղբայրությամբ բարձրացավ մեր աշխարհում ամեն քար». տեքստիլ կոմբինատի նախկին բանվոր, բանաստեղծ Գեղամ Սարյանի այս խոսքերը ևս մտաբերում, երբ տեսնում եմ, թե ինչպես են լենինականցի Ասինկն ու քրթայիսցի Շոթան քրտինք մտած մաքրում Արվիլաձեի փողոցի ավերակները ու դրանք բարձում Կրասնոդարից եկած «ԿՐԱԶ» ավտոմեքենաները։ Ցուրտ կեսօր է, հավատալով քաղաքի վերաշինող եղբայրության ուժին, ընկերներիս հետ շրջում եմ Լենինականի այսուայն թաղամասերում։ Մանկավարժական ինստիտուտի մոտ տեղեկանում եմ, որ երկրաշարժը իր փլատակների տակ է թողել հազածանքներ, բանտ և աքսոր տեսած, 2-րդ խմբի հաշմանդամ ԿԱՐԱՊԵՏ ԴՈՒՐ ԳԱՐՅԱՆԻՆ։ Նա բանասիրական գիտությունների թեկնածու էր, դոցենտ, սիրված գրականագետ, դասախոս և բազմաթիվ գրքերի ու հոդվածների հեղինակ, մեկ բանաստեղծություն գրեցինք։ Պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղին մոտենալ չէր լինում. գինվորների հսկողությամբ աշխատող երիտասարդներից միայն հասցրինք իմանալ, որ այստեղի փլատակների տակ զոհերն անթիվ են։ Լենինականի ֆիլհարմոնիայում էլ էր սուգ։ Ժողգործիքների անսամբլից երկրաշարժին զոհ էին գնացել երաժիշտ ԱՍՏՂԻԿ ՍԱՆՈՒՇՅԱՆԸ, ու ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԸ։ Ավերակված և հրդեհված բարձրահարկում Պարգևը ձրգտել է փրկել իր կնոջն ու 15 օրական երեխային, հորն ու մորը։

(Շարունակելի)

ՓՇՐՎԱԾ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

Ախ, կորցրի ծաղկեփունջս,
Վաղ հեռացան ինձանից,
Ես ոնց չլամ, չմորմոքամ
Գոնե հնովից, շատ հեռվից:

Մատիկներս հատ-հատ ընտրած,
Սրտիս մոտիկ ու հարազատ,
Կորան, անցան, էլ չեն դառնա,
Թողին ինձ էլ հուսահատ:

ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սվետլանան շատ էր սիրում ասումները: Կատակասեր էր, ժիր ու աշխույժ: Փոքրուց երազում էր դառնալ դերասան...

Ծնվել է 1953 թ., Լենինականում: Սովորել և ավարտել է Նեկրասովի անվան դպրոցը: Ցանկությանն հակառակ ընդունվեց թեթև արդյունաբերության տեխնիկում: 1974 թվականին որպես տեխնոլոգ աշխատանքի անցավ կարի արտադրական միավորման մասնաճյուղում: Սերտ կապված էր կոլեկտիվի անդամների հետ, պատրաստ էր կիսելու նրանց ինչպես ուրախությունը, այնպես էլ հոգսն ու տխրությունը:

Ամուսնացած էր և իրեն շատ երջանիկ էր զգում երկու տղաներով, երազում էր աղջիկ ունենալու մասին: Եվ ահա կատարվեց երազանքը. 1988 թվականի հունիսի 7-ին ծնվեց աղջիկ, որին Անի կոչեցին:

Անիի ծննդյան կես տարին նախապատրաստվում էին նշելու երեք երեխաների մկրտությամբ, որը պետք է տեղի ունենար դեկտեմբերի 7-ին: Այդ չարաբաստիկ օրը խախտեց ամեն ինչ, կյանքի անիվը շուռ եկավ: Անավոր աղետից 6 օր անց միայն կարողացանք գտնել Սվետլանային՝ փոքրիկ Անիին կրծքին սեղմած:

ՏԻԳՐԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1974 թվականի մայիսին՝ գարնան ամենալավ ամսին: Սովորում էր № 34 դպրոցի 8-րդ դասարանում: Դասընկերները նրան դպրոցի պարծանքն էին համարում. օժտված էր լավագույն հատկություններով: Հումանիտար առարկաներից բացի շատ էր սիրում նաև սպորտը, հատկապես լողը, որով և պարապում էր:

Նվիրված էր ընկերներին, օգնում էր թույլ երեխաներին: Բարի էր ու հարգալից ծերերի ու հաշմանդամների նկատմամբ, աշխույժ էր ու կենսուրախ: Տիգրանը մի երազանք ուներ՝ ավարտել միջնակարգը և դառնալ զինվորական դպրոցի սան:

Տիգրանի մանկավարժները և այլ բնագավառի մարդիկ նրան մեծ ու փայլուն ապագա էին գուշակում: Արհավիրքից առաջ տուն էր վազել դասամիջոցին, երևի թե կանխազգալով սպասվելիքը և օգնության շտապելով հիվանդ քրոջը՝ Աննային: 9 հարկանի շենքի 5-րդ հարկում էին բնակվում: 5 օր որոնելուց հետո Տիգրանին ու Աննային հայտնաբերեցին 3-րդ հարկի շքամուտքի աստիճանների վրա, ձեռք-ձեռքի ամուր բռնած:

ԱՆՆԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1976 թ.: Սովորում էր № 34 դպրոցի 6-րդ դասարանում, միաժամանակ № 6 երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժնում: Անչափ սիրում էր երաժշտությունը և երազում երաժիշտ դառնալու մասին: Շատ էր կապված մայրիկի հետ, կիսում էր նրա տնտեսական հոգսերը: Դեկտեմբերի 7-ի օրը [illegible] լսել չէր զգում և մնացել էր տանը: Վրա հասավ անավոր պահը և քույր ու եղբայր վայրկյանների ընթացքում դարձան անմեղ զոհեր:

ԵՐՎԱՆԴ ԼԵՎՈՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ընդամենը երկու օր էր մնացել, որ Երվանդը դառնար 40 տարեկան: Ինչպես էին սպասում այդ օրվան, ինչպես էին պատրաստվում կինն՝ Ամալյան, և երկու դուստրերը՝ Արմինեն ու Սիրուշիկը: Ինքն էլ աշխատում էր ցույց չտալ, բայց գողունի հետևում էր այդ անցուդարձին, որոշում՝ ում հրավիրել ու բարձրաձայն մտորում էր. արդեն 40 տարեկան եմ, կյանքիս մոտ կեսն ապրել եմ, գուցե և կեսից ավելին: Կե՞սը, խեղճ մարդ, դու չէիր էլ մտածում, որ դրանք քո վերջին օրերն էին:

Երվանդը կոշիկի № 2 ֆաբրիկայում մեխանիկ էր: Միշտ վազող, միշտ օգնելու պատրաստ գործընկերոջը սիրում էին բոլորը: Ինքն էլ իր մեծ սրտում տեղ ուներ բոլորի համար: «Ուզում եմ, որ բոլորը երջանիկ լինեն, բոլորը ժըպտան»—ասում էր միշտ: Ավաղ, քո ժպիտն էլ ընդմիշտ քարացավ դեմքիդ...

ՆԵԿՏԱՐ ԱՎԵՏԻՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Շատ կանխագուշակում էր, թե նախախնամության թելադրանք, հնարավոր չէ որոշել. միշտ կրկնում էր. «Ես երկրաշարժի ծնունդ եմ, երկրաշարժով էլ կգնամ»: Իրոք, ծնվել էր 1926-ին, զոհվեց 1988-ին: Երկու չարագույժ տարեթվեր՝ իր և իր ժողովրդի հազարավոր զավակների համար:

Ողջ ծննդատան կոլեկտիվը կարող է վկայել նրա, որպես անթերի անձի, սորը կնոջ և մոր փաստը: Հիրավի անվանը համապատասխան խառնվածքի տեր էր Նեկտար Մխիթարյանը. բարի, առաքինի, անշահախնդիր, այնքան համեստ ու իր պահանջների մեջ զուսպ, որ անգամ իր մահով չցանկացավ ավելորդ հոգս պատճառել ուստերին ու դուստրերին:

Արհավիրքը կատարեց իր չար գործը, տասնյակ հազարների հետ չխնայելով չորս երեխաների և 8 թոռների սիրելի Նեկտար Մխիթարյանի կյանքը:

ԽՈՐՏԱԿՎԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔԸ

ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱԹԱՆՅԱՆԸ ծնվել է 1957 թ. Լենինականում, հաճախել № 28 միջնակարգ դպրոց և ավարտել այն լավ գնահատականներով. Ընդունվել է շինարարական տեխնիկում և ուսմանը զուգահեռ աշխատել Չկալովի անվան կարի ֆաբրիկայում.

Հակոբը երջանիկ ընտանիք կազմեց ՄԱՐՈ ՌԱԶՄԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ հետ (Ծնված 1962 թ., Լենինականում): Համեստ ընտանիք էր, օրինակելի. 1987 թ. հոկտեմբերի 31-ին ծնվում է նրանց առաջնեկը՝ փոքրիկ ԼԻԼԻԹԸ: Ավա՜ղ...դեկտեմբերի 7-ին երիտասարդ ամուսինները իրենց փոքրիկի հետ զոհվում են բնակարանում.

Խորտակվեց մի ընտանիք ևս ու մնաց հուշը նրանց մասին՝ տանջող, ամեն վայրկյան հետապնդող այս հուշը:

ԵՐԵՔԸ՝ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ

Դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժը շատ դաժան զոհեց Բաղդասարյանների ընտանիքի եկամտամը: Ընտանիքի չորս զավակներից երկուսը զոհվեցին կյանքի ամենածաղկուն շրջանում. մեկը շքաժանվելով սիրելի դստրիկից, մյուսը՝ որբացնելով երկու զավակներին:

ՎԱՐԴԱՆ ՎԱՆԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ ծնվել էր 1960 թվականի հունվարի 3-ին: Սովորել էր Պետրոս Դուրյանի անվան № 28 դպրոցում: Վաղ հասակից հրապուրվել էր բռնցքամարտով և մարզական այս ձևում հասել բարձր հաջողություններ:

Նա նոր էր վերադարձել զինվորական ծառայությունից և անցել աշխատանքի: Վայելում էր ընկերների սերը ու համակրանքը: Հաց բերել էր ամուսնանալ, ընտանիք կազմել: Բնությունը մի անուշիկ դստրիկ էր պարգևել նրան: Երեկոյան ժամերին սիրում էր դստեր ձեռքը բռնած դուրս գալ զբոսնելու: Այն անավոր օրը նոր գրկում զոհվեց նաև 5-ամյա ՆՈՒՆՈՒՇԸ (ՆԻՆԱՆ):

ԵՆՈՔ (ՖԵԼԻՔՍ) ՎԱՆԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ ծնվել էր 1962 թվականին: Սովորել է Պետրոս Դուրյանի անվան № 28 դպրոցում: Զինվորական ծառայությունից հետո աշխատանքի էր անցել քաղաքային հրշեջ ծառայությունում: Սիրում էր կարդալ, շատ էր հետաքրքրվում հայոց պատմությամբ:

Ենոքը ամուսնացել էր սիրած աղջկա հետ, ուներ երկու զավակներ: Դեկտեմբերի 7-ին ծառայողական պարտականությունները կատարելիս զոհվեց Բաղարի 9 հարկանի շենքերից մեկում:

ՍՈՎՈՐԱԿԱՆ, ԲԱՑԵ ՉԱՎԱՐՏՎԱԾ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՖԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատակասեր, մտերասեր, շրջապատի կողմից սիրված ու հարգված անձնավորություն էր Անահիտը: Երգն ու երաժշտությունը նրա տարերքն էր: Սիրում էր կյանքը, մարդկանց, բոլորից շատ՝ իր սիրասուն զավակներին, որոնց համար հիվանդանոցից շուտ դուրս գրվեց, որ նրանց կողքին լիներ: Ի՞նչ իմանար, որ երբանցից բաժանվելու է բնդմիշտ և անվերադարձ: Հեռացավ կյանքից՝ 33 տարին չբոլորած:

Անահիտը սովորել է Պուշկինի անվան դպրոցում, ավարտելուց հետո աշխատանքի անցել Զկալովի անվան կարի արտադրական միավորումում: Նրա մասին հաճախ է գրվել թերթերում: Արդեն երկու տարուց ավելի ժամանակ է անցել այդ անավոր օրվանից, սակայն չի փարատվում ծնողների, եղբոր ու քույրերի անհուն վիշտը: Նա գոհվել է սեփական բնակարանում:

ՄԱՐՈ ՆԱՊՈԼԵՈՆԻ ՇԻՐԱԿՅԱՆ

Մեվել է 1958 թվի հոկտեմբերի 24-ին, Ախուրյանի շրջանի Ախուրյան գյուղում: 1956 թ. ընդունվել է շրջկենտրոնի № 1 միջնակարգ դպրոցը և ավարտել 1976 թ.: Նույն թվին ընդունվել է Լենինականի առևտրի տեխնիկում և ավարտելուց հետո ամուսնացել: Թողեց երկու անչափահաս երեխաներ:

Ընդամենը 30 գարուն ապրեց երիտասարդ մայրը, կինը, դուստրը: Ու այնքա՜ր էլ. ողբերգությունից ավելի քան երկու տարի անց, չի մեղմվում Մարոյի մոր կրած կիծը: Նա իր սրտի խոսքը նույնիսկ չափածոյի է վերածել.

Անվերջանալի երազ է
ասես,
Մշուշ է, խավար, սպասում
եմ ես,
Ահա, ուր որ է կգա իմ
Մարոն,
Խավար աչքերիս լույս
կտա նորեն...

ԱՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԺԻՐԱՅՐԻ

ԱՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԺԻՐԱՅՐԻ— ծնվել է 1964 թվականի հոկտեմբերի 17-ին, Լենինականում: 1972 թ. ընդունվել և 1982-ին ավարտել է Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցը: Ուսանելու տարիներին աչքի է ընկել մտավոր ունակություններով, կարողությամբ, ուշիմությամբ, եղել է բարձր կարգապահության անձնավորություն: Նվիրված ու սիրված ընկերուհի էր դասընկերների ու հարգված աշակերտուհի՝ ուսուցիչների համար: Դպրոցը ավարտելուց հետո, հենց նույն տարում ընդունվում է պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը, ուր ևս իրեն դրսևորում է և՝ որպես բարեխիղճ ուսանող, և՝ որպես հարգված համակուրսեցի:

Զարագուշակ աղետից ընդամենը մեկ ամիս առաջ ամուսնացել էր: Ուրախ էր, անչափ երջանիկ:

Հիշում է մայրը— աղետից մի քանի ամիս առաջ ասած խոսում էինք երկրաշարժից, թե ստդպիսի դեպքերում ինչպես պետք է պահի մարդ իրեն, թե որտեղ պետք է կանգնի և այլն: Նույնիսկ Արմինեիս տարա դեպի դուռը, բաց արեցի այն և ցույց տվեցի իրը ամենապահով տեղը՝ միջանցքի հարթակը:

ՄԵԿ ԱՆԳԱՄ ԷԼ ԾԱՓԱՀԱՐԵՆՔ ԳՈՀԱՐԻՆ

ԱՆԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ ԺԻՐԱՅՐԻ— ծնվել է 1967 թ. ապրիլի 19-ին: 1974-ին ընդունվել և 82-ին ավարտել է Մաշտոցի անվան դպրոցը: Միաժամանակ № 2 երաժշտական դպրոցի սան էր: Դեռևս դպրոցական տարիներից մաս նակցել է երաժշտական կլորդ օջախների խաղագույն կատարողների համաքաղաքային մրցույթների:

Այդ տարիներին կազմված, մեր քաղաքի երաժշտական դպրոցներից տարբեր մրցույթների մասնակից լավագույն կատարողների փոքրիկ գրքույկում իր արժանի տեղն ունի նաև փոքրիկ Գոհարը:

Ուսումը շարունակեց Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում, որն ավարտեց 1986-ին՝ թողնելով այն փայլուն գիտելիքներ տուացած: Ավարտական վկայականների հանձնման ժամանակ ուսումնարանի տնօրեց Լ. Մելիքյանը հանձնեց Գոհարին նրա վկայականը և երբ վերջինս պատրաստվում էր նստել, տնօրենն ասաց,— Գոհար, դարձիր, թող մեկ անգամ էլ քեզ ծափահարեն: Աշխատանքային նշանակման հետ չհամաձայնվեց—ուրեմն վե՞րջ, ես ավարտեցի ուսումս, բայց չէ՞ որ այնքան բան դեռ ունեմ սովորելու: Եվ որոշեց ուսումը շարունակել Երևանի մանկավարժական ինստիտուտի գեղարվեստա-երաժշտական բաժնում, որն էլ չհասցրեց ավարտել:

ԱՆԱՆՅԱՆ ԱՆԻ ԺԻՐԱՅՐԻ

ԱՆԱՆՅԱՆ ԱՆԻ ԺԻՐԱՅՐԻ— ծնվել է 1971 թ. մայիսի 7-ին: 1978-ից հաճախել է № 20 դպրոցը: Միաժամանակ եղել է Լենինականի արվեստի դպրոցի խորեոգրաֆիկ-պարային բաժնի սան: 1988-ին ավարտել է դպրոցը: Փոքրամարմին այս աղջնակին ավելի սրտատոչ ու հմտազատ էր պարային արվեստը: ուզում էր դպրոցն ավարտելուց հետո ընդունվել գեղարվեստա-թատերական ինստիտուտ:

ՀԻՇՈՒՄ Է ՄԱՅՐԸ— Մի փոքրիկ մանրուք եմ հիշում, որին հիշտ է, նշանակություն չեմ տալիս, այնուամենայնիվ, չեմ կարող մոռանալ: Ընտանիքով պիտի արտագաղթեինք Կանադա, ուր մեր հարազատությունն է ապրում: 1988-ի դեկտեմբերի 5-ին աշխատանքից հեռանալու դիմում ներկայացրի համապատասխան բաժին (չեմ ուզում նշել): Ներկայացրի դիմումս գործավարին, որն ուզեց իմանալ աշխատանքից հեռանալուս պատճառը: Երբ իմացավ, շատ ար համարհական նետեց... Ես ձեզ բարի ճանապարհ չեմ մաղթում»:

Իրոք որ, խոսք կա, որ մարդ է սպանում:

ՀԱՄԱՍՓՅՈՒՌ ՍԱՐԻԲԵԿԻ ՄԱԿԱՐՅԱՆ

Մեվել է 1913 թ. Ախուրյանի շրջանի Շիրակ գյուղում: Ամուսնացել և բնտանիքով տեղափոխվել է Լենինական: Բազմազավակ մայր էր Համասփյուռ Մակարյանը, ուներ 5 տղա և 2 աղջիկ: 1988 թ. չաթ աղետին զոհ դարձավ հերոսուհի մայրը՝ յոթ զավակների յոթնապատիկ սիրով լուսապսակված: Իր ողջ կյանքը նա նվիրել էր երեխաների երջանկությանը, իր բարի, կյանքի նկատմամբ ճշմարիտ խորհուրդներով օգնել նրանց ճիշտ ապրելու: Ու վայելում էր 11 թոռնիկների ուրախությունը:

«Դու հրաժեշտ չտվեցիր մեզ, իմ անուշ մայրիկ, որպեսզի մենք հավերժ սպասենք քեզ...»:

ՌԻՄԱ ԽԱՉԻԿԻ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1951 թ. Լենինական քաղաքում: Հոգով ու սրտով կապված էր ժողովրդական երգարվեստի հետ: Երգում էր Ստ. Շահումյանի անվան կուլտուրայի տան ինքնագործ խմբում: Երգում էր հոգով և մեծ ոգևորությամբ, հաճելի պահեր պարգևելով իր ունկնդիրներին: Ռիման մասնակցել է բազմաթիվ համերգների և փառատոնների, արժանացել է մի շարք մրցանակների, պատվոգրերի: Ավաղ, չարագույժ աղետը ընդհատեց երիտասարդ երգչուհու կյանքի թելը...բազմաթիվ երազներ մնացին չիրականացված:

Աղետին զոհ գնացած նրա գեղարվեստական ղեկավար Քենտեմջյանը տարբեր առիթներով շատ անգամ է կրկնել. «Երգը Ռիմայի տարերքն է»...

ՀՐԱՆՈՒՇ ԵՂԻԾԻ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է 1915 թ. Լենինական քաղաքում: Աշխատում էր գուլպեղենի արտադրական միավորումում և մինչև կյանքի վերջին ակնթարթը, չբաժանվեց հարազատ ձեռնարկությունից:

Կյանքի դառնություններն ու դժվարությունները Հրանուշ տատիկին չէին խանգարում, որպեսզի նա աշխատանքի նը կատմամբ դրսևորեր բարձր նվիրվածություն և հոգատար վերաբերմունք: Նա իր աշխատանքային փորձն ու հմտությունը հաճույքով էր փոխանցում երիտասարդներին: Երազում էր իր թոռնիկներին տեսնել երջանիկ և բախտավոր: Ավաղ, Հրանուշ տատիկին դաժան արհավիրքը հնարավորություն չտվեց տեսնելու այդ երջանկությունը:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ-ի մի շարք շրջաններում երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալու և երկրաշարժի հետևանքները վերացնելու համար բացված է հատուկ հաշիվ, որի համարն է 700412: Այս հաշվին կարելի է փոխանցել բնակչության, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կամավոր դրամական մուծումները: Միջոցներն ընդունում են ԽՍՀՄ-ի բանկերի բոլոր հիմնարկները:

«ԱՎԱՆԳԱՐԴ»

ՆԵՂԱՐՈՒՄ՝ Ավտոբիտեղան ավանի բնակելիները։ Լուսանկարը՝ Հ. Ներսիսյանի

Արքնացի՛ր, Գյումրիս...

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Անչափագիր չարիք ու ոխ,
Ա՜խ, ոխ տեսա,
Դժո՜խք, դժո՜խք,
Դժոխք տեսա,
Անձնավորի դաժանության խորհուրդ էր սա,
Զարմանք էր սա։

***

Քանի՞ բանիսը վիհերում կորան—
Տոհմից Շատվորյան,
Զիթողցյան տոհմից,
Տոհմից Քեշիշյան,
Պապայան տոհմից,
Տոհմից Թագվորյան,
Զախոյան տոհմից,
Տոհմից Կանեցյան,
Կնտեխցյան տոհմից,
Տոհմից Գյումուշյան,
Քալաշյան տոհմից,
Տոհմից Ղավազյան
Տիրոսյան տոհմից,
Տոհմից Մարդոյան,
Զուլոյան տոհմից,
Տոհմից Սեխպոսյան,
Զուտնաչյան տոհմից,
Տոհմից Բալբուրդյան
Քերոբյան տոհմից,
Տոհմից Հաջաթյան,
Մինասյան տոհմից,
Տոհմից ՎարդևաՀյան,
Խաչոյան տոհմից,
Տոհմից Մխոյան,
Ավագյան տոհմից,
Սարգսյան տոհմից,
Տոհմից Խաչվանքյան,
Դավոյան տոհմից,
Տոհմից Ռնուսյոզլյան,
Զուհարյան տոհմից...

***

Ո՞հ, երևրացունց աղետ ահավոր,
Դիվային երեր,
Եղեռն բնատուր,
Որ ավերեցիր նաև հոգիներ,
Այնպես արեցիր, ով դու սևալույս,
Որ դժոխասույզ
Մեր մեռյալներին գտնելու համար մենք
միմիթարվենք,
Որ ինչքան էլ սև ցավին ընդհարվենք—
Փառք տանք, որ գտանք մեր հարազատին
Ախ, թեկուզ մեռած։
Ախ, Գյումրի՜ս, Գյումրի՜ս—
Շիրակի գարդը, վարքն Հայաստանիս,
Որ մոլորակի ուխտատունն էր սուրբ,
Տնքաց վերքերից ու ցավերից ցուրտ.
Միծաղի տուն էր, դարձավ վշտաբույն,
Զվարճախոս էր՝ դարձավ լռություն,
Թե համոհոտ էր մի ազգախորհուրդ,
Դարձավ սգավոր, սակավ ժողովուրդ,
Թե հագուկապով գույների խաղ էր՝
Շռայլ պերճության զարդերով հրաշք,
Պարուրվեց գույնով, որ միայն սև էր,
Գույնը խնդության՝ արցունքով հեղեց.
Ա՜խ, սև դեկտեմբեր դու ուրբանության,
Որ ամանորի մուտքն էիր ոնդում
Ավանդապատկեր իմ հին Գյումրիի,
Ա՜խ, ինչպես դարձար զարկված թռչուն։
Քանիսը ընկան
Շիվ-շիվ, ա՜խ դալար,
Քանի կյանքի ձայն
Խորքերում սևմութ,
Լույս աղերսեցին
Ատծուց անգութ—
Լռեցին, հանգան...

***

Մի սիրուն Ալվարդ՝
Տոհմից Զուհարյան
Խոսում էր հանդարտ
Ռնասանողական ժողովում իրենց.
— Արցա՞խը մնում է,
Մեր հարազատը,
Նրան օգնելը՝
Պարտքն է մեր հոգու,
Առաջարկում եմ՝
Մեռ թոշակները
Նվիրաբերենք հայոց Արցախին։

(Շարունակելի)

ՋԵՄՄԱ ԱՐԱՐԱՏԻ ԳԱՐԻԲՋԱՆԸ ծնվել է 1955 թ. Լենինականում, սովորել և ավարտել № 18 դպրոցը։ Մանկուց շատ էր սիրում երեխաներին և երազանքն էր դաստիարակչուհի դառնալ։ 1973 թ. ընդունվեց մանկավարժական ուսումնարանը և տարբեր մանկապարտեզներում՝ որպես փոխարինող աշխատելուց հետո աշխատանքի անցավ Թույլ տեսնող երեխաների գիշերօթիկ դպրոցում։ Երեք երեխաների մայր էր։ Վերջապես բնակարան ստացան նոանկյունի թաղամասում, որտեղ էլ իր ամուսնու՝ Վրեժի և փոքրիկ ՇՈՒՇԱՆԻԿԻ հետ կնքեն ցին իրենց մահկանացուն։

ՎՐԵԺ ԳՈՒՐԳԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել է 1951 թ. Ղարիբջանյանում։ Սկզբում աշխատում էր որպես ավտոտեսուչ, ապա միլիցիայի պահակային բաժնում։ Եռատ էր սիրում իր փոքրիկ Շուշանիկին, որի հետ էլ ազետի գոհ դարձավ։ Միրված հայր էր, բնատանիքին նվիրված ամուսին։ Նրանց երկու ծնողազուրկ փոքրիկները անհուն կարոտով են հիշում իրենց սիրելի ծնողներին և քույրիկին։

ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ

ՈՐՏԵՂԻ՞Ց ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Մեր համաքաղաքացի ներ Կ. Զաքարյանը, Մ. Գրի գորյանը և Ս. Սաֆարյանը գրում են՝ «Մենք ուզում ենք ձեռք բերել և հետագայում կազմել «Հիշողության» բոլոր համարները։

Որտեղի՞ց կարելի է ձեռք բերել դրանք»։

Տեղեկացնենք, որ «Հիշողության» բոլոր համարները վաճառվում են «Կումայրի» թերթի խմբագրության կոմիսիոն կրպակում, որը գտնվում է Կիրովի փողոցի եզրամասում՝ կանգառի մոտ։

***

Ն. Զազյանը և Պ. Մանուկյանը հարցնում են. «Քաղաքի գրեթե բոլոր գրախանութներում եղել ենք, սակայն արձակագիր Հովհաննես Մելոնյանի «Քարոզարան» գիրքը չենք տեսել։

Այն որտեղի՞ց կարելի է ձեռք բերել»։

«Քարոզարանը» վաճառվել է կոլեկտիվ հայտերով և այժմ մնացածը (սահմանափակ քանակով, շուրջ 200 օրինակ) վաճառվում է «Կումայրի» թերթի խմբագրության կոմիսիոն կրպակում։

Եվ թերթի, և գրքի գները անփոփոխ են, բացառությամբ պրեզիդենտական 5 տոկոսի։

ԼԻԱՆԱ ՍԵՐԳՈՅԻ ԿԱԼԶԻԼՈՒԹՅԱՆ

Այս խոսուն հայացքով աղջնակը ծնվել է 1978 թվին։ Սովորում էր Ղարիբջանյանի անվան № 9 դպրոցում։ Հաճախում էր նաև Տիգրանյանի անվան № 3 երաժշտական դպրոց։ Փորձում էր սովորել դաշնամուրային արվեստի գաղտնիքները։ 1988-ի դեկտեմբերյան այն աղետալի մռայլ օրը նա ընկերների հետ № 9 դպրոցի փլատակների տակ կնքեց իր մահկանացուն, բոլորի հիշողության մեջ ընդմիշտ մնալով 4-րդ դասարանցի։

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԸ
ԿՈՒՄԱՅՐԻ ՔԱՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅԻՍՅԱՆ Փ. 17